

Մի ննջէք, զի մի մտանիցէք ի փորձութիւն .  
 եւ ինքն դարձեալ աղօթէք : Իսկ Պետրոս զար-  
 թուցեալ ի քնոյ բառնայր զգլուխն եւ հայէր  
 ստա եւ անդ, թմբեալ ի քնոյն եւ դարձեալ <sup>95</sup>  
 ննջէք : Յանկարծակի բացաւ երկինքն այն եւ ել  
 ի միջէն հրեշտակ մի թեւաւոր, ունելով բա-  
 ժակ ի ձեռին . եւ եկեալ առ Քրիստոս զօրա-  
 ցուցանէր ըստ այնմ թէ ի հրեշտակաց զօրա-  
 բանայի . եւ թէ Հրեշտակք զօրացուցեն <sup>100</sup>  
 զնա, ասէ Դաւիթ : Եւ դարձեալ ելանէր ի  
 յերկինս ի վերայ պղնձէ թէլի բարակ, որ մար-  
 դոյ չերեւի . սպա փակեցան երկինքն : Եւ  
 մինչ կայր Քրիստոս ի զուռն, ասա ի միւս  
 զոնէն զայր պիղծն Յուդայ, մին ձեռն քէսս <sup>105</sup>  
 եւ միւս ձեռօքն ցուցանէր զՔրիստոս . եւ  
 եկեալ զինվորքն սուսերօք եւ բրօք, ջահիւք  
 եւ դամպարօք, զրեհօք եւ սաքի երկաթիւք՝  
 կամէին զՔրիստոս ըմբռնել : Իսկ Պետրոս  
 զարթեալ քնաթաթախ ետես (զի) զՏէր նորա <sup>110</sup>  
 կապեալ էին . եհան զսուրն եւ եհատ զուռնն  
 քահանայապօղծին ծառայի զաջ ձեռն եւ դա-  
 կանջն . եւ ակներեւ կ'երեւէր ներկն կարմիր՝  
 արիւնի տեղ : Եւ սպա առեալ տանէին զՔրիս-  
 տոս անարզանօք իբրեւ զմահապարա : Զոր <sup>115</sup>  
 մեք տեսեալ զայն յարտասուռս հարաք, մինչ  
 մարմինք մեր զողային ի մեծի ազէտիցն . եւ  
 զի այնպէս թուէր որպէս թէ ոք մերձ էր ի  
 ժամ չարչարանացն Քրիստոսի : Եւ զինչ բան  
 որ կայ ի զրի եւ աւետարանի, զամէնն այան <sup>120</sup>  
 եւ յայանի արած էր եւ շինած, որ ամէն ա-  
 ճամի մարդ կ'իմանայր :